12 հոկտեմբերի 2025թ.

Բերդ համայնքի ղեկավար՝
տիկին Աստղիկ Հակոբյանին

Հարգելի՝ տիկին Հակոբյան,

Հայտնում ենք Ձեզ, որ անցած ժամանակահատվածում 05.03.2020թ. «Փարոս» հիմնադրամի (ԱՄՆ) և Բերդ համայնքի միջև կնքված՝ Այգեպար գյուղի 1-ին փողոց, 8 գործարան հասցեում գտնվող շենք-շինությունները անհատույց օգտագործման պայմանագրի շրջանակներում «Փարոս» հիմնադրամի միջոցներով իրականացվել է բաժանելի և անբաժանելի հետևալ շենքային բարելավումները՝

- Երկու շենքերի վրա նոր տանիքի տեղադրում,
- 12 կՎ հզորությամբ արևային համակարգի տեղադրում,
- Եռաֆազ էլեկտրաէներգիայի, ջրի և ջրահեռացման հասանելիություն երկու շենքերում,
- Վերանորոգում շենքերի տարբեր հատվածներում՝ նոր հատակներ և պատեր, նոր դռների և պատուհանների տեղադրում,
- Զուգարանների, փոքր խոհանոցի, մեծ արդյունաբերական խոհանոցի, գրասենյակային տարածքների ստեղծում,
- Մեկ շենքի առաջին և երկրորդ հարկերի միջև աստիճանների կառուցում և այլ շինարարական աշխատանքներ:

Միաժամանակ, դեռևս 06.02.2024 թ. Ձեզ տեղեկացրել էինք, որ «Փարոս» հիմնադրամը գրանցված լինելով ԱՄՆ-ում և սահմանափակված լինելով իր անունից ՀՀ-ում գործունեություն ծավալելու հարցում, ունենում է եթնիկական խոչընդոտներ՝ դժվարանում է անմիջականորեն ներգրավվել 05.03.2020թ. «Փարոս» հիմնադրամի և Բերդ համայնքի միջև կնքված պայմանագրի շրջանակներում դրված նպատակների շարունակական իրականացմանը:

Խնդրի լուծման և «Փարոս» հիմնադրամի կողմից Բերդի համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման, բիզնես միջավայրի ակտիվացմանն ուղղված տարաբնույթ ծրագրերի հետագա իրականացմանն աջակցելու համար առաջարկում ենք՝ լուծել «Փարոս» հիմնադրամի և Բերդ համայնքի միջև կնքված վերոնշյալ Այգեպար գյուղի 1-ին փողոց, 8 գործարան հասցեում գտնվող շինություններն անհատույց օգտագործման պայմանագիրը, և նույնաբովանդակ անհատույց օգտագործման պայմանագիր կնքել «Փարոս» հիմնադրամի կողմից անմիջականորեն աջակցվող և ՀՀ ռեզիդենտ հանդիսացող «Դեպի առաջ» բարեգործական հասարակական կազմակերպության հետ, ինչը «Փարոս» հիմնադրամին թույլ կտա ապահովել վերը հիշատակված զարգացման ծրագրերի իրականացումը Բերդ համայնքում:

Հարկ ենք համարում տեղեկացնել, որ «Դեպի առաջ» բարեգործական հասարակական կազմակերպությունն այն նույն կազմակերպությունն է, որի միջոցով «Փարոս» հիմնադրամն իրականացնում է ՀՀ-ում իր բարեգործական ծրագրերի մեծամասնությունը, այդ թվում՝ Արցախից բռնի տեղահանված ընտանիքներին բնակության վայրով ապահովելու ծրագրերը, ներառյալ՝ Ներքին Կարմիրաղբյուր գյուղում տների հատկացումը:

Հարգանքով՝

«Փարոս» հիմնադրամ
2217 5-րդ փողոց Բերկլի, Կալիֆոռնիա 94710 ԱՄՆ
Գործադիր տնօրեն՝ Պարսեհ Աբաջյան

«Դեպի առաջ» ԲՀԿ
Երևան, Դերենիկ Դեմիրճյան 36
Նախագահ՝ Սևան Ամիրյանս